

**ՈՒՇԱԲԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի մարթ ու կնիկ երկու ախշիկ են ունենում, մի տղա: Մի ախշիկը քորփա ա ըլում, դեռ հլա ըրորոցումը, ծծկեր ա ըլում: Դրանք խմոր են ունցում, մերը փուռը վառում ա, գալիս ա խմորը գնդում: Եղնա գնում են փուռը սրփելու:

Մերը փուռը սրփում ա, պրծնում, վենձ ախշկանն ասում ա.— Ախշի՛, ախշի՛, գնա գունդը բի, հացը թխենք:

Ախշիկը գնում ա, եղ գալի մորն ասում ա.— Նանի, գունդ չկա:

Ասում ա.— Կրակի գաս դո՛ւ, էս հաղաղ խմորը գնդեցի, ո՞նց թե գունդ չկա:

Ասում ա.— Հլա դե արի տես, խու էս խա՞ փում չեմ:

Մերը գնում ա.— Վո՛ւյ, դրուստ որ գունդ չկա:

Էն ըրորոցի կրակի էկածը դրուստ որ չիմ կերած ա ըլում: Նա կրակ ուտե, օրն օրի վրա վենձանում ա: Մի քիչ որ ման գալու ա անում հա, մոր ծիծն ուտելիս վեր ա դնում ու մորն ուտում: Քիրը տուն ա գալիս թե չե՛ նրան էլ ա ուտում: Ախպերն ուրիշ տեղ ա գնացած ըլում:

Ըրիգունը գործի տեղից հերը տուն ա գալիս թե չե, նրան էլ ա վեր դնում— ուտում: Ախպերն ուրիշ տեղից գալիս ա հասնում գեղի դրաղը թե չե, խալիները խաբար են տալիս.— Սհե, սհե:

Ըտի ախպերն ասում ա.— Ես էս գեղումն էլ կենալ չեմ: Գլուխն առնում ա, մի ըշխարի վրա գնում:

Գնում ա, գնում ա, շատն ու քիչն ինքը գիղե, գնում ա ու մի վերու ծմակում տենում, որ մի եթթաղ ա շինած: Էղ եթթաղումը մի քոռ մարթ բերում ա ոչխարնին տուն անելիս շենքումը կազնում ա, հատ-հատ շենքովն անց կացնում, հմբարում, տուն անում, դուռը փագում: Եղնա գնում ա կրակ անում, խմոր ունցում, կրկենի թխում, ուտում: Էղ տղեն էլ գնում ա նրա կշտին նստում, հմա խոսում չի, կրկենուց ինքն էլ անասս կտրում ա, ուտում:

Էն մարթը որ տենում ա կրկենին թեզ հատավ հա, ըրմանում ա, ասում ա.— Ո՞վ էս ըտի, թե տղա էս՝ խոսի, իմ տղեն էս, թե ախշիկ էս՝ խոսի, իմ ախշիկն էս, թե մարթ էս՝ էլի խոսի, իմ հընգերն էս:

Էնա տղեն խոսում ա:

Ասում ա.— Դե իմ տղեն էս:

Էլ եղ կրկենի ա թխում, որ ըռավոդն ուտեն:

Ըռավոդը եղ հցավորվում են, տղեն ոչխարնին տանում ա ըրածացնելու, հլիվորը տանը մնում ա: Հմա հլիվորն էն տղին իրեք ճամփա ա շհանց տալի, երկուսի հմար ասում ա.— Դենը տար, դենը տար: Էն մնի հմար ասում ա.— Դենը տանիս ոչ, իմ օտկունն ընդի յա դիբել:

Էն էլ էն երկու ճամփովը տանում ա, էն մնովը տանում չի: Մի օր, երկու օր, մխելի տհենց անց ա կենում, մի օր էլ ասում ա.— Հլա դենը տիմ տանիլ, տենամ էն ի՞նչ կա ընդի, որ հլիվորը թողուց ոչ դենը տանելու:

Էնա տանում ա, տենում ա ստանեքեր են:

Հլե դրան տենում են թե չե, ասում են.— Ախպեր ջան, ըստի արի, ըստի արի:

Կանչում են ու իրանք պար են գալի: Գնում ա:

Ստանեքերից մինն իրա քվորն ասում ա.— Գնա քլփաթինը բի:

Ըտի դա գլխի ա ըլում: Քլփաթինն ընդի ա ըլում դրած, չկել ստանի հասնիլը— ինքը վիր ա ունում, քլփաթնով էն մի ստանին ճմրթում ա, նղավացնում: Ասում են.— Խի՞ տհենց արիր:

Ասում ա.— Բա քլփաթինն ուզում ա որե աչկերս հանե՞ : Իմ հոր աչկերը քոռացրել եք, հմի էլ ուզում եք իմը քոռացնե՞ք: Էկեք թեզ իմ հոր աչկերը սղացրեք:

Ասըմ են.— Դուր աս, մենք ենք քոռացրել, դու որ տեհ լավ տղա ես, առ՝ քու հոր աչկերն էլ, էս դեղն էլ. տար քու հոր աչկերը տեղը դիր, էս դեղն էլ քսե, կսաղանա:

Էդ տղեն եդ աս գալի, ասըմ աս.— Հայրիկ ջան, բա ինձ թողեիր ոչ դենը գնամ, բա ինձ չի ինձ էլ բան արին:

Ասըմ աս.— Բալա ջան, դենը գնալ մի, իմ աչկերը քոռացրին, քունն էլ կքոռացնեն:

Ասըմ աս.— Ես նրանցից եմ ուստա, կարալ չեն:

Էնա աչկերը տեղն աս դնըմ, դեղը քսըմ, սղացնըմ աս:

Օրի մի օրն ասըմ աս.— Հայրիկ ջան, կարալ չե ս ինձ ըդու անես, գնամ իմ հայրենիքը, իմ վաթանը տեսութին, ն՞ե թողել եմ էկել:

Ասըմ աս.— Ինձ չեմ կարալ:

Էնա մի ձի ասարքըմ, ոչխարի կաթով էլ կրկենի աս թխըմ, խուրջինը լքցնըմ, ձիուն նստացնըմ աս, ճամփու դնըմ:

Էդ տղեն գնըմ աս տենըմ, որ իրանց գեղի շփլթուն կտրել աս: Էն կրակի էկած իրան ոչ բարով քիրը չիմնուն էլ կերած աս ըլըմ: Մենակ մի որցակ աս ըլըմ թողած, որ կանչե, ինքը ձենիցը վի կենա, մին էլ մի դարփին աս թողած ըլըմ, որ ըտամնին սրիլ տա:

Գնըմ աս իրանց դուռը հասնըմ թե չե, քիրը տանիցը դուս աս գալի, ասըմ աս.— Վա՛յ ախպեր ջան, բարով, բարով: Գալիս աս, փթաթորվըմ, եղնա խուրջինը վի աս ունըմ, տանըմ աս տուն:

Տանը մի սեաթումը կուլ աս տալի խուրջինը, դուս աս գալի, ասըմ աս.— Ախպեր ջան, բա դարդակ էս էկե՛լ:

Նա էլ վախըմ աս թե ասե. «Բա խուրջինն ի՞նչ արիր»: Ասըմ աս.— Հա, դարդակ եմ էկել:

Ձին ախպոր ձեռիցն առնըմ աս, տանըմ աս հորըքելու: Տանըմ աս տալըմն էրկու ոտն էլ կուլ տալի, գալիս ասըմ.— Վա՛յ, ախպեր ջան, բա ձիդ էրկու ոտնանի աս:

Եդ ասըմ աս.— Հա՛ :

Հմի էլ եդ գնըմ աս էն էրկու ոտն էլ ուտըմ, գալիս աս ասըմ.— Վո՛ւյ, ախպեր ջան, ձիդ առանց ոտն աս:

Հմի էլ եդ աս գնըմ, ձիու ջամդաքն ուտըմ, գալիս աս ասըմ.— Վո՛ւյ, ախպեր ջան, բա ոտով էս էկե՛լ:

Ըտամնին փունջ աս ըլըմ, գնըմ աս դարփնին սրիլ տալու, ախպորը տանը թողըմ աս, որ գա եղնա ուտե:

Դուս աս ըլըմ թե չե՝ մկները լիզու են ըլըմ, ասըմ են.— Նաչար տղա, ջահել կյանքդ հանգցնիլ տի, գնա, փախի որե, գնաց ըտամնին սրիլ տալու, գալ տի քի էլ ուտիլ:

Եղնա էդ մկները բերըմ են դրան մի սանդրը տալիս, մի շուշա լիքն աղ, մին էլ էրկու մոմ, ասըմ են.— Նա գալ տի քի եղնա հասնիլ, որ տենաս հասնըմ աս հա, էս սանդրը վրա արա, դալին ծմակ ու մոշուտ կդառնա, աղաքը կփագի, դու կփախչիս: Որ տենաս ծմակն անց կացավ հա, էդ ուզըմ աս քի հասնի, շուշեն լիքը աղը վրա արա՝ շուշեն սուր ածլքեր կդառնա, ոտները կկտրատե, աղն էլ կտրածնին կդառնա՝ կմխկտացնե, կարալ չի քի հասնի: Որ տենաս եդ հասնըմ աս, ընդով էս մոմերը վեր գձե, նրանք չինարի կդառնան, վեր կլիս վրեն, էլ կարալ չի ուտե:

Էդ տղեն տվածնին վեր աս ունըմ, փախչըմ: Ուշաք քիրը գալիս աս տենըմ, որ տանը չի: Կռանըմ աս թախտի տակը մտիկ անըմ, մկները օջորքիցը ծվծվըմ են: Դրա օջորքն աս մտիկ անըմ թե չե, նրանք ֆոդ են ածըմ դրա աչկերը, որ դա մլոլ անե, չկելը նա մի քիչ էլա հեռանա: Եդ աչկերը թամզըմ աս, գնըմ աս եղնեն հասնելու աս ըլըմ, էն սանդրը վրա աս անըմ: Սանդրը դրա ըղաքին ծմակ աս դառնըմ, փշոտ թփեր են դառնըմ, մասրքերը, փշերը բռնըմ են, հմա էդ ճպոապորելով անց աս կենըմ: Գալիս աս եդ հասնելու աս անըմ, հմի էլ էն աղովը լիքը շուշեն աս վրա անըմ:

Դրանց էլ չի մտիկ անըմ ածըլքերը ոտները կտրատըմ են, աղը նի յա դառնըմ մղմդորիկը գձըմ, հմա եդ արինը շաղ տալով գնըմ ա: Մին էլ էնա հա իրան հորացըվի եթթադին հասնելիս ա ըլըմ, տենըմ ա հրես էնա հա հասնըմ ա: Դա մոմերը վեր ա գձըմ, էրկուսն իրար յանաշու չինարըքերը են դուս գալի, վեր ա ըլըմ դրանց մնի վրա: Ուշաբ քիրը գալիս ա ծառի որքն ըռխով, ըտամնով կրծըմ, պոկըմ ա: Տղեն տենըմ ա պոկեց, հմի էլ էն մնին ա վեր ըլըմ: Հմի էլ էն մինն ա կրծըմ: Տենըմ ա պոկիլ տի, էն իրան հորացըվի շներին ձեն ա տալի:

Դրանք էրկու վենձ, դոմփար շներ են ըլըմ, ասըմ ա.— Հասար ու Բասար, Հասար ու Բասար, էկե՛ք հասե՛ք, հենց կուլ տվեք, որ մի կաթիլ արին չմնա:

Հլե մին էլ տենըմ ա, որ Հասարն ու Բասարը գալիս են: Գալիս են ամենքը մի կոնում ըռխըմ, ծվատորըմ, քրքրըմ, հենց կուլ են գձըմ, որ արին չեն թողըմ գեղնին մնա (վա՛յ տամ նրա գլուխը):

Եղնա գնըմ ա իրա հորացըվի կուշտը, ասըմ ա.— Սհե՛, սհե՛:

Հերացուն գալիս ա դրան փթաթորվըմ, ասըմ ա.— Բալա ջան, էլ ըշխարըմը դարդ չունիմ, ես էլ էի էդ ուշաբիցը փախել, էկել էս վերունի չուըմը ջոգ կենեի, հմա ըստի էլ ստանըքերը չի թողեին դաթար մնամ, աչկերս էլ հանեցին, հմա դուն էկար նրանց դիվանն արիբ: Հմի էլ գնացիր էդ ուշաբին վերչ տվիր, աշխարը հլալեցիր: Հմի կարանք մենք արխեին ապրինք: Ասըմ ա, քոչ ու բրխանեն բարցըմ են ձիանու վրա, ոչխարն աղաք անըմ՝ դրա իրանց գեղը: Գնըմ են մի լավ տուն ու տեղ են շինըմ, էդ տղի հմար ուրիշ գեղից մի լավ ախչիկ են ուզըմ, հըրսանիք անըմ, նոր պրծնիս ամեն ցավից ու չոռից, ինչ պրծնըմ են: